«Այբ» ավագ դպրոց

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ **2024 թ., ապրիլ**
Տևողություն՝ **1 ժամ 15 րոպե**
Հավելյալ նյութ՝ *Պատասխանների գրքույկ*

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել *Պատասխանների գրքույկի* կազմին գրված ցուցումներին:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:
Հարցերի միավորների ընդհանուր քանակը **32** է:

Այս փաստաթուղթը բաղկացած է 7 տպագիր և 1 դատարկ էջերից:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (20 ՄԻԱՎՈՐ)

Ուշադրությո՛ւն. Հայոց պատմություն բաժնում ներառված է 4 թեմա, յուրաքանչյուր շրջափուլից՝ մեկական թեմա՝ բաղկացած երկու հարցից: Ընտրե՛ք թեմաներից ցանկացած երկուսը և պատասխանե՛ք հարցերին:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

ԹԵՄԱ՝ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ I-III –ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ: (10 ՄԻԱՎՈՐ)

1.Ե՞րբ և ինչու՞ սկսվեց «Հռոմեա-պարթևական տասնամյա պատերազմը»:

Ի՞նչ նպատակներ էր հետապնդում այս պատերազմում պարսից Վաղարշ Արշակունին և ինչու՞ էին հայերն աջակցում նրան:

Պարթևստանի թագավոր Վաղարշ I-ը (51-80թթ) Հռոմեական կայսրության դեմ որոշում է դաշինք ստեղծել: Այդ նպատակով նա մտադիր էր իր եղբայրներից Տրդատին դարձնել Հայաստանի թագավոր, իսկ Բակուրին՝ Ատրպատականի:
Պարթևստանը փոխել էր իր նվաճողական քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ և ցանկանում էր համագործակցել նրա հետ: Դա էր պատճառը, որ, երբ 52թ.-ին Տրդատն ու Վաղարշը պարթևական զորքով մտան Հայաստան, հայերը բացեցին մայրաքաղաքի դռները նրանց առաջ:
Հռադամիզդը, որ այդ ժամանակ հայոց գահակալն էր, պարտություն կրելով՝ փախավ Վիրք:
Հռոմը չէր կարող հաշտվել Հայաստանում իր ազդեցությունը կորցնելու մտքի հետ, ինչով պայմանավորված՝ 54 թ.-ին Ներոն կայսրը Արևելք է ուղարկում Կորբուլոն զորավարին, և սկսվում է տասնամյա պատերազմը:

2.Ի՞նչ հետևանքներ ունեցավ Հռանդեայի ճակատամարտը, և ինչպես հանգուցալուծվեց հայ-հռոմեական կոնֆլիկտը: Բերե՛ք Հռանդեայի պայմանագրի մեկական դրական և բացասական հետևանք:

62թ. գարնանը Արածանիի ափին՝ Հռանդեա վայրում տեղի ունեցած ճակատամարտում Պետոսի զորքը պարտություն է կրում Վաղարշի և Տրդատի գլխավորած հայ-պարթևական ուժերից: Հռոմեական զորքերը, ի նշան պարտության, ծնկաչոք անցնում են հայ-պարթևական զորքի նիզակների՝ «լծի» տակով: Հռոմի Ներոն կայսրը հեղինակությունը փրկելու համար հայտնում է, որ կճանաչի Տրդատի գահակալությունը, եթե նա անձամբ գա Հռոմ և թագ ստանա իրենից:
64 թ. Հռանդեա վայրում կնքվեց պայմանագիր, ըստ որի.
Դրական հետևանք՝ Հռոմը ճանաչելու էր Տրդատին, որպես Հայոց թագավոր:

Բացասական հետևանք՝ ըստ պայմանագրի՝ Տրդատը պարտավորվում էր մեկնել Հռոմ և Ներոն կայսրից անձամբ թագ ստանալ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

ԹԵՄԱ՝ ՊԱՅՔԱՐ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ: (10 ՄԻԱՎՈՐ)

1.Ներկայացրե՛ք Պապի գահակալումը. ե՞րբ և ու՞մ օգնությամբ նա բազմեց հայոց գահին: Ե՞րբ է տեղի ունեցել Զիրավի ճակատամարտը և ի՞նչ հետևանքներ է ունեցել:

Հռոմեական օգնական զորքով Պապը վերադառնում է Հայաստան և հաստատվում Հայոց գահին (370-374 թթ):
371թ.-ին տեղի ունեցավ Զիրավի ճակատամարտը, որտեղ հայոց զորքը՝ ավելի քան 90 000, ղեկավարում էր սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը: Հայոց զորքը կատարյալ հաղթանակ է տանում պարսիկների դեմ, և վերջիններս փախչում են մարտադաշտից:
Զիրավի հաղթանակը հնարավորություն է տալիս Պապին զբաղվել երկրի ներքին գործերով:

2. Ի՞նչ քայլեր կատարեց Պապը երկիրը հզորացնելու նպատակով: Բացատրե՛ք Պապի վարած ներքին և արտաքին քաղաքականության մեկ դրական և մեկ բացասական հետևանք Հայոց թագավորության համար:

Պապի բարեփոխումների շնորհիվ բանակը դառնում է հարյուր հազար:
Նա հոգևորականներին և նրանց հարազատներին պարտադրում է կատարել պետական և զինվորական ծառայություն, եկեղեցական հողատիրությունը կրճատում է, փակում կուսանոցները:
Նա վերացնում է բերքի մեկ տասանորդ հարկատեսակը:
Պապը հայոց եկեղեցին դուրս է բերում հունական կախվածությունից՝ շրջանցելով Կեսարիայում ձեռնադրվելու ավանդույթը: Պապն ինքն է ձեռնադրում նոր կաթողիկոսին:

Շնորհիվ այս վերափոխումների՝ հայոց եկեղեցին ձեռք է բերում ինքնուրույնություն:

Արտաքին քաղաքականության ոլորտում Պապը փորձում է հարաբերություններ հաստատել Պարսկաստանի հետ, իսկ Հռոմի Վաղես կայսրից պահանջում է տարածքներ, որոնք նախկինում կազմել են հայոց թագավորության մաս: Այս ամենն առաջացնում է Հռոմի կայսեր զայրույթը:

Ներքին դրական հետևանք՝ հայոց եկեղեցու ինքնուրույնությունը Հռոմից:

Ներքին բացասական հետևանք՝ Պապի եկեղեցական բարեփոխումները հանգեցրին պետության և եկեղեցու միջև պառակտման:

Արտաքին դրական հետևանք՝ Պապը վերականգնեց երկրի սահմանները՝ Ուրմիայից հարավ ընկած Գանձակ Շահաստանով, իսկ հյուսիսում՝ Մեծ Հայքի և Վիրքի միջև՝ Կուր գետով:

Արտաքին բացասական հետևանք՝ Պարսկաստանի հետ հարաբերություններ սկսելը, Հռոմից տարածքներ պահանջելը հանգեցրեց Հռոմի հետ հարաբերությունների վատթարացմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՈՐ ԴԱՐԵՐՈՒՄ

ԹԵՄԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX –ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ: (10 ՄԻԱՎՈՐ)

1. Բացատրե՛ք 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի պատճառները: Ի՞նչու և ինչպե՞ս էին հայերն աջակցում ռուսական բանակին: Բացատրե՛ք, թե ինչ նշանակություն ունեցավ Երևանի բերդի գրավումը:

1813թ.հոկտեմբերի 12-ին Գյուլիստանի պայմանագրով Արևելյան Հայաստանից զգալի տարածքներ անցել էին Ռուսաստանին, և Պարսից թագավոր Աբաս-Միրզան, չհաշտվելով այդ իրողության հետ, 1826թ. հուլիսին, խախտելով Գյուլիստանի պայմանագիրը, ներխուժեց Արցախ՝ սկսելով ռուս-պարսկական երկրորդ պատերազմը:
Ռուսական զորքերի հաջողություններն ոգեշնչեցին հայ բնակչությանը: Հայրենիքի ազատագրման գաղափարներով ոգևորված՝ բազմաթիվ հայեր մասնակցեցին ռուսական զորքերի հետ ռազմական գործողություններին:
1827թ. գարնանը Թիֆլիսում ձևավորվեց հայ կամավորական առաջին ջոկատը: Լոռի-Փամբակում հայտնի էր Մարտիրոս Վեքիլյանի, Շամշադինում՝ Գրիգոր Մանուչարյանի ջոկատները:
1827թ.հոկտեմբերի 1-ին ռուսական զորքերը և հայ կամավորները մտան Երևանի բերդ: Այն ռուսական զորքի ամենամեծ հաղթանակն էր, և վճռեց պատերազմի ելքը:

2.Ե՞րբ է կնքվել Թուրքմենչայի պայմանագիրը. ներկայացրեք՛ պայմանագրի կետերը: Բացատրեք պայմանագրի մեկական դրական և բացասական հետևանք:

1828թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայ գյուղում կնքվեց հաշտության պայմանագիր, ըստ որի Երևանի և Նախիջևանի խանություններն անցան Ռուսաստանին: Ռուս-Պարսկական սահմանն անցնելու էր Արաքս գետով՝ Պարսկաստանի տիրապետության տակ թողնելով Պարսկահայքը և Ատրպատականը:
Դրական հետևանք՝ ըստ պայմանագրի, Պարսկաստանի տիրապետության տակ մնացած հայերին թույլատրվում էր վերաբնակվել Ռուսաստանին անցած շրջաններում:
Բացասական հետևանք՝ Պարսկաստանի տիրապետության տակ մնացին Պարսկահայքը (Խոյ և Սալմաստ գավառներով) և Ատրպատականը:

ԹԵՄԱ՝ ՀԱՅ - ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ: (10 ՄԻԱՎՈՐ)

1. Ի՞նչ նպատակով 1920թ. մայիսին Մոսկվա գործուղվեց ՀՀ պատվիրակությունը. ո՞վ էր այն ղեկավարում:

Ինչու՞ 1920թ. սկսված հայ-ռուսական բանակցությունները մտան փակուղի:

ՀՀ դիվանագիտության կարևոր խնդիրներից էր Ռուսաստանի հետ կապերի հաստատումը, նրա կողմից անկախության ճանաչումը: Այդ նպատակով 1920թ.մայիսին Մոսկվա գործուղվեց ՀՀ պատվիրակությունը՝ Լևոն Շանթի գլխավորությամբ:
Բարեկամական հարաբերություններ հաստատելու դիմաց Ռուսաստանը պայման էր դնում, որ Հայաստանը հրաժարվի արևմտյան կողմնորոշումից և հայկական հարցի լուծումը փոխանցի խորհրդային կառավարությանը: Ահա թե ինչու հայ-ռուսական բանակցություններն ընդհատվեցին:

2.Ե՞րբ Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեն մտավ Հայաստան: : Բացատրե՛ք Հայաստանի խորհրդայնացման պատճառները: Ներկայացրեք՛ 1920թ-ի դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագիրը
Բաքվում կազմավորված Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեն (ՌՀԿ)՝ Սարգիս Կասյանի գլխավորությամբ, 11-րդ բանակի զորամասերի ուղեկցությամբ 1920թ.նոյեմբերի 29-ին մտավ Հայաստան և հռչակեց խորհրդային իշխանություն Հայաստանում: Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն (ՀՍԽՀ):
Հայաստանը խորհրդայնացվեց խաղաղ պայմաններում, առանց ռազմական գործողությունների և հեղափոխության, բայց ոչ թե հայ ժողովրդի կամքով և ցանկությամբ, այլ արտաքին ուժերի՝ Խորհրդային Ռուսաստանի և Քեմալական Թուրքիայի պարտադրանքի ներքո: 1920թ.դեկտեմբերի 2-ին Երևանում, Հայստանի ներկայացուցիչ Դրոյի և Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Լեգրանի միջև ստորագրվեց համաձայնագիր, որով Հայաստանը հռչակվեց Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն (ՀՍԽՀ):

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (12 ՄԻԱՎՈՐ)

Ուշադրությո՛ւն. Համաշխարհային պատմության բաժնում հարկավոր է պատասխանել <u>երկու</u> առաջադրանքի: Առանց շտապելու կարդացե՛ք և ուսումնասիրե՛ք բերված աղբյուրները: Պատասխանե՛ք հարցերին՝ հիմնավորելով տրված աղբյուրներում առկա փաստերով:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1 (6 ՄԻԱՎՈՐ)

Աղբյուր Ա. Նկարը վերնագրված է «Թագավորական տորթը»: Այն ստեղծվել է Ֆրանսիայում (հեղինակն անհայտ է) և անդրադարձ է 1815 թ.-ի Վիեննայի վեհաժողովին:

Նկարում պատկերված են Էլբայից փախուստի դիմած Նապոլեոն I-ը, որը կտրում է Ֆրանսիան քարտեզից: Նրա ձախ կողմում իր մանկահասակ որդին է՝ Նապոլեոն II-ը: Նապոլեոնից աջ կանգնած են նրա ավագ եղբայր Ժոզեֆ Բոնապարտը (Նապոլեոնի օրոք՝ Նեապոլի և Իսպանիայի արքա), ապա՝ Ավստրիայի ներկայացուցիչ Կլեմենս ֆոն Մետերնիխը (կշեռքը ձեռքին), Ռուսաստանի կայսր Ալեքսանդր I-ը, Պրուսիայի արքա՝ Ֆրիդրիխ Վիլհելմ III-ը և Մեծ Բրիտանիայի արքա Գևորգ III-ը: Ֆրանսիայի ներկայացուցիչ Չարլզ Մորիս դը Թալեյրանը թաքնված է սեղանի տակ՝ Լուի (Լյուդովիկոս) XVIII-ի պատկերը գրկած:

Աղբյուր Բ։ Հատվածը մշակված է ըստ պատմագետ Ջ. Սպիլվոգերի «Արևմտյան քաղաքակրթությունը» գրքի։

Մետերնիխը պնդում էր, որ Վիեննայում առաջնորդվել է ***օրինականության*** սկզբունքով։ Եվրոպայում խաղաղություն և կայունություն վերահաստատելու համար նա անհրաժեշտ համարեց վերականգնել օրինական միապետներին, որոնք կպահպանեին ավանդական հաստատությունները և կարգերը։ Դա արդեն արվել էր Ֆրանսիայում և Իսպանիայում՝ Բուրբոնների վերականգնմամբ, ինչպես նաև իտալական մի շարք պետություններում, որտեղ տիրակալները վերադարձվել էին իրենց գահերին։…Պրուսիան և Ավստրիան պահպանեցին որոշ լեհական տարածքներ։ Ստեղծվեց նոր, անվանապես անկախ Լեհական թագավորություն՝ Ռուսաստանի Ռոմանովների դինաստիայի իշխանության ներքո։ Չնայած Լեհաստանին երաշխավորված էր իր անկախությունը, նրա արտաքին քաղաքականությունը (և հենց թագավորությունը) դրվեց Ռուսաստանի վերահսկողության տակ։ Որպես փոխհատուցում կորցրած լեհական հողերի դիմաց՝ Պրուսիան ստացավ Սաքսոնիայի երկու հինգերորդ մասը, նապոլեոնյան գերմանական Վեստֆալիայի թագավորությունը և Հռենոսի արևելյան ափը։ Ավստրիան փոխհատուցվեց ավստրիական Նիդերլանդների կորստի համար՝ ստանալով Իտալիայի երկու հյուսիսային նահանգների՝ Լոմբարդիայի և Վենետիկի վերահսկողությունը։ Այս տարածքային վերադասավորումները կատարելիս Վիեննայի դիվանագետները կարծում էին, որ նրանք ձևավորում են ***ուժերի նոր հավասարակշռություն***, որը կկանխի որևէ երկրի գերիշխանությունը Եվրոպայում։

Հարց 1. Օգտվելով Աղբյուր Ա-ի և աղբյուր Բ-ի տեղեկություններից և Ձեր գիտելիքներից՝ բացատրե՛ք, թե ովքեր և ինչու/ինչ նպատակով հրավիրեցին Վիեննային վեհաժողովը։

Պատասխան

Աշակերտը Աղբյուր Ա-ում և Աղբյուր Բ-ում ներկայացվող գաղափարները՝ համադրելով իր փաստական գիտելիքի հետ պետք է ներկայացնի ովքեր և ինչ նպատակով էին հրավիրել վեհաժողով։ Ծաղրանկարում տեսանելի է Վիեննայի վեհաժողովին մասնակից մեծ տերությունների ներկայացուցիչների իրական նպատակները։ Աղբյուր Բ-ում պետք է ուշադրություն դարձնի այն գաղափարներին, որ արտացոլում էին վեհաժողովին մասնակից երկրների պաշտոնական դիրքորոշումը։

1814-1815 թթ. Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում Նապոլեոնյան Ֆրանսիային հաղթած տերությունները հրավիրեցին համաժողով, որի նպատակը ոչ միայն հաշտություն կնքելն էր պարտված Ֆրանսիայի հետ, այլև Եվրոպայում «կայուն խաղաղություն» հաստատելը, վերականգնելով միջազգային հարաբերությունների բնականոն ընթացքը՝ օրինականության հավասարակշռության, անվտանգության տեսանկյունից***։ (Տե՛ս Աղբյուր Բ՝ «Մետերնիխը պնդում էր, որ Վիեննայում առաջնորդվել է օրինականության սկզբունքով։***

...Այս տարածքային վերադասավորումները կատարելիս Վիեննայի դիվանագետները կարծում էին, որ նրանք ձևավորում են ուժերի նոր հավասարակշռություն, որը կկանխի որևէ երկրի գերիշխանությունը Եվրոպայում»):

Վեհաժողովին մասնակցում էր գրեթե ողջ Եվրոպան, սակայն որոշիչ դեր էին խաղում Ավստրիան՝ ներկայացուցիչ՝ Կլեմենս ֆոն Մետերնիխ, Ռուսաստանը՝ կայսր Ալեքսանդր I, Մեծ Բրիտանիան՝ արքա Գևորգ III, և Պրուսիան արքա՝ Ֆրիդրիխ Վիհելմ III: Նրանք էլ վերաձևեցին Եվրոպայի քարտեզը, հաշվի չառնելով այլ պետությունների շահերը: *(Տե՛ս Աղբյուր Ա-ն և աղբյուր Բ-ն):*

Ուժերի հարաբերակցությունը Եվրոպայում պահպանելու համար ստիպված էին նաև համաժողովի աշխատանքների մասնակից դարձնել Ֆրանսիային, ներկայացուցիչ՝ Չարլզ Մորիս դը Թալեյրան, ում նպատակն էր, օգտագործելով հաղթող երկրների միջև գոյություն ունեցող հակասությունները Ֆրանսիայի տեղը վերականգնել Եվրոպայի տերությունների շարքում, որն էլ նրան հաջողվեց:

Այդ հակասությունները ակնառու էր նոր հողեր զավթելուն ուղղված դիվանագիտական պայքարում: Պրուսիան ձգտում էր իրեն միացնել Սաքսոնիան, Ռուսասատանը՝ Պրուսիայի տիրապետության տակ գտնվող լեհական հողերը, Ավստրիան՝ ավելացնել իր իտալական տիրույթները: Իր հերթին Նապոլեոն Բոնապարտը, որ հասցրեց հետ վերադառնալ աքսորից և վերականգնել իշխանությունը 100 օրով, ևս ցանկանում էր Ֆրանսիան կտրել ընդհանուր քարտեզից:

Ի վերջո Լեհական հողերի վրա Նապոլեոնի ստեղծած Վարշավայի դքսությունը լուծարվեց: Լեհաստանի տարածքը բաժանվեց Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի միջև: Ճանաչվեց Ֆինլանդիայի բռնակցումը Ռուսաստանին: Պահպանվեց Իտալիայի և Գերմանիայի մասնատվածությունը: Անգլիան ստացավ Մալթա կղզին և հոլանդական մի շարք գաղութներ:

(Տե՛ս Աղբյուր Ա՝«Թագավորական տորթը» ծաղրանկարը,որտեղ տեսանելի է մասնակից տերությունների իրական նպատակները՝ զավթել նոր հողատարածքներ, վերաձևելով Եվրոպայի քարտեզը»):

Վեհաժողովի մասնակիցները նաև կարծում էին, որ Մեծ հեղափոխությունը խախտել է Եվրոպայի բնականոն կյանքը, որոշեցին վերականգնել նախկին կարգը՝ իշխանությունը վերադարձնելով տապալված արքայատոհմերին և իշխանական տներին:

Ընդունված որոշումներն իրականացնելու համար ստեղծվեց «Սրբազան դաշինքը»: *(Տե՛ս Աղբյուր Բ՝ Մետերնիխը պնդում էր, որ Վիեննայում առաջնորդվել է օրինականության սկզբունքով: Եվրոպայում խաղաղություն և կայունություն վերահաստատելու համար նա անհրաժեշտ համարեց վերականգնել օրինական միապետներին, որոնք կպահպանեին ավանդական հաստատությունները և կարգերը»):*

Հարց 2. Օգտվելով աղբյուր Ա-ից, աղբյուր Բ-ից և Ձեր գիտելիքներից՝ ներկայացրե՛ք Վիեննայի վեհաժողովի մեկ դրական և մեկ բացասական արդյունք և/կամ հետևանք:

Պատասխան

Աշակերտը պետք է քննարկի Աղբյուր Ա-ում և Աղբյուր Բ-ում ներկայացվող գաղափարները՝ համադրելով իր փաստական գիտելիքի հետ: Այստեղ պետք է դիտարկվի Վիեննայի վեհաժողովի մեկ դրական և մեկ բացասական արդյունք:

Վիեննայի համաժողովը կարևոր նշանակություն ունեցավ միջազգային հարաբերությունների համակարգը մեծ տերությունների կողմից առավել կառավարելի դարձնելու տեսանկյունից: Մասնակից տերությունների միջև ուժերի հավասարակշռություն պահելը դարձավ կարևոր նպատակ, որը և մասնակից մեծ տերությունները փորձում էին իրականացնել: **(Տե՛ս Աղբյուր Բ-ն):**

Արդյունքում, «Սրբազան դաշինքը», որտեղ գերակշռում էին Ռուսաստանը, Ավստրիան և Պրուսիան, համատեղ ջանքերով կարողացան ճնշել 1820-1830-ական թթ. հեղափոխական շարժումները Իտալիայում, իսպանիայում և Լեհաստանում:

Այնուամենայնիվ, բացասական է Վիեննայի վեհաժողովում հին կարգերի պահպանումը, հաղթող տերությունների զավթողական կեցվածքը, քանի որ զոհաբերվեց ազգերի ինքնորոշման իրավունքը: Անտեսվեց իտալացիների, գերմանացիների, բելգիացիների, նորվեգացիների, լեհերի ինքնուրույն պետություն ունենալու իրավունքը: **(Տե՛ս Աղբյուր Ա-ն):**

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2 (6 ՄԻԱՎՈՐ)

Աղբյուր Ա. Ներկայացված են ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի «Տասնչորս կետերը», որոնք, ըստ նրա, պետք է հիմք հանդիսանային Առաջին աշխարհամարտի խաղաղության բանակցությունների և պայմանագրերի համար: Այս սկզբունքները ուրվագծվել են 1918 թվականի հունվարի 8-ին՝ պատերազմի նպատակների և խաղաղության պայմանների վերաբերյալ ԱՄՆ Կոնգրեսում նախագահի ելույթում:

1. Խաղաղության բաց պայմանագրերի կնքում:
2. Ծովերում նավագնացության բացարձակ ազատություն:
3. Առևտրի ազատություն՝ մաքսային պատնեշների վերացում:
4. Զինաթափման երաշխիքներ:
5. Գաղութային հարցերի անկանխակալ կարգավորում:
6. Գերմանիայի կողմից ռուսական բոլոր բռնազավթված տարածքների ազատագրում:
7. Բելգիայի ազատագրում և պետության վերականգնում:
8. Գերմանիայի կողմից բռնազավթված ֆրանսիական տարածքների վերադարձ՝ ներառյալ Էլզաս և Լոթարինգիան:
9. Իտալիայի սահմանների ճշգրտում:
10. Ավստրո-Հունգարիայի ժողովուրդներին ինքնիշխանության տրամադրում:
11. Գերմանիայի կողմից բռնազավթված Ռումինիայի, Սերբիայի և Չեռնոգորիայի տարածքների ազատագրում, Սերբիային դեպի ծով ելքի տրամադրում:
12. Օսմանյան տերության թուրքական մասերի ինքնուրույն գոյություն և ազգային երկրամասերի ինքնիշխանություն:
13. Լեհաստանի անկախ պետության ստեղծում:
14. Ազգերի համընդհանուր միության (Ազգերի լիգա) ստեղծում՝ տարածքային միասնականության և մեծ ու փոքր պետություններին հավասարապես քաղաքական անկախության երաշխիքներ տրամադրելու նպատակով:

Աղբյուր Բ. Հատվածը անգլիացի հայտնի տնտեսագետ Ջ. Քեյնսի 1919 թ. դեկտեմբերին հրատարակված «Խաղաղության տնտեսական հետևանքները» գրքից է: Փարիզի խաղաղության համաժողովի ժամանակ Քեյնսը աշխատում էր բրիտանական պատվիրակության կազմում:

Հաշտության պայմանագիրը ոչինչ չարեց Եվրոպայի տնտեսական վերականգնման ուղղությամբ: Չարվեց ոչինչ պարտված տերություններին բարի դրացիների վերածելու, նորաստեղծ պետություններին կայունություն հաղորդելու, Ռուսաստանին ճիշտ ուղու վրա կանգնեցնելու նպատակով: Այն ճանապարհ չհարթեց դաշնակիցների տնտեսական համերաշխության համար: Փարիզում համաձայնության չեկան Ֆրանսիայի և Իտալիայի քայքայված ֆինանսների վերականգնման հարցում: Ոչինչ չարվեց աշխարհի նոր կարգի ձևավորման համար: Կլեմանսոն

մտածում էր միայն այն մասին, թե ինչպես խեղդամահ անի թշնամու տնտեսությունը, Լոյդ Ջորջը՝ թե ինչպես հասնի ավելի հաջող գործարքի կնքման ու տուն բերի մի բան, որ առնվազն մեկ շաբաթ դիմանա քննադատության, իսկ ԱՄՆ-ի նախագահը՝ թե ինչպես անի, որ իր ձեռնարկած քայլերը չհակասեն արդարությանն ու իրավունքին:

Հարց 1. Օգտվելով Աղբյուր Ա-ի եւ Բ-ի տեղեկություններից և Ձեր գիտելիքներից՝ ներկայացրեք, թե որքանով էին Փարիզի խաղաղության համաժողովում կնքված պայմանագրերը համապատասխանում Վ. Վիլսոնի 14 կետերում նշված սկզբունքներին: Հիմնավորեք Ձեր պատասխանը նվազագույնը երկու կոնկրետ օրինակով:

Պատասխան

Աշակերտը պետք է դիտարկի Աղբյուր Ա-ում և Աղբյուր Բ-ում ներկայացվող գաղափարները՝ համադրելով իր փաստական գիտելիքի հետ, ներկայացնելու համար նվազագույնը երկու օրինակով, թե որքանով էին Փարիզի խաղաղության համաժողովում կնքված պայմանագրերը համապատասխանում Վ. Վիլսոնի 14 կետերում նշված սկզբունքներին:

1918թ.նոյեմբերի 11-ի Կոմպիենում կնքված զինադադարով ավարտվում է Առաջին աշխարահամարտը, որից հետո հրավիրվեց Փարիզի խաղաղության համաժողովը (1919 հունվար-1920) նոր աշխարհակարգ ձևավորելու համար: Պարտված Քառյակ դաշինքի երկրների հետ պայմանագրեր կնքելու համար «Մեծ հնգյակի» պատվիրակությունները՝ ԱՄՆ՝ նախագահ Վ. Վիլսոն, Մեծ Բրիտանիա՝ վարչապետ Լ. Ջորջ, Ֆրանսիա՝ վարչապետ Ժ.Կլեմանսո, Ճապոնիա՝վարչապետ Սայոնի, Իտալիա՝ վարչապետ Օռլանդո առանցքում ունեին Վ. Վիլսոնի 14 կետերը՝ մանդատային համակարգի ներմուծման, Միջազգային արդարադատության մշտական դատարանի հիմնման, հավաքական անվտանգության, Ազգերի լիգայի ստեղծման և մի շարք այլ գաղափարներ ***(Տե՛ս Աղբյուր Ա-ն):***

Ըստ այդմ՝

1919 հունիսի 28-ին Վերսալում ստորագրվեց պայմանագիր Գերմանիայի հետ: Որով Գերմանիան հօգուտ Ֆրանսիայի, Բելգիայի, Չեխիայի և Լեհաստանի զիջելով իր տարածքի 1/8 մասը, զրկվում էր գաղութներից և զինաթափվում: Արգելվում էր պահել ստորջրյա նավատորմ և ռազմական ավիացիա, բանակը սահմանափակվում էր մինչև 100 000 զինվոր: Պարտավորվում էր վճարել մեծ ռազմատուգանք՝ հատուցում հաղթած երկրների կրած նյութական վնասների համար:
Նմանատիպ պայմանագրեր ստորագրվեց Գերմանիայի դաշնակից Ավստրիայի, Բուլղարիայի, Հունգարիայի և Օսմանյան Թուրքիայի հետ: Հետագայում քեմալական Թուրքիային հաջողվում է վերանայել Սևրի պայմանագիրը Լոզանի կոնֆերանսում, մյուսների հետ կնքված պայմանագրերը մնում էին ուժի մեջ:

Միայն Հեռավոր Արևելքում Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի և Ճապոնիայի շահերի բախման արդյունքում կարիք առաջացավ Վաշինգտոնում հրավիրել մի նոր վեհաժողով (1921թ. հունվար-1922թ. փետրվար):

Այսպես ձևավորվեց Վերսալ-Վաշինգտոնյան համակարգը:

Օրինակ 1. Ըստ էության գաղութատիրությունը պահպանվեց, տեղի ունեցավ պարտված երկրների գաղութների վերաբաժանում հաղթած տերությունների միջև, իսկ Ազգերի լիգան էլ դարձավ գաղութատիրության նոր ձև, մինչդեռ այն պետք է ապահովեր խաղաղությունն ու միջազգային անվտանգությունը:

Օրինակ 2. Պարտվածների միակողմանի զինաթափում:

Օրինակ 3. Վերսալի պայմանագրով Գերմանիան ճանաչվեց հիմնական մեղավոր և պատասխանատու, վրան դրվեց մեծ ռեպառացիաներ[1], որն էլ առաջ բերեց վրեժխնդրության (ռևանշի):

(Տե՛ս Աղբյուր Բ-ն «Հաշտության պայմանագիրը ոչինչ չարեց Եվրոպայի տնտեսական վերականգնման ուղղությամբ: ....Այն ճանապարհ չհարթեց դաշնակիցների տնտեսական համերաշխության համար»):

Երեք օրինակներում էլ առկա են Փարիզի խաղաղության համաժողովում կնքված պայմանագրերի անհամապատասխանություն Վ. Վիլսոնի 14 կետերում նշված սկզբունքներին: ***(Տե՛ս Աղբյուր Ա-ն, «Կետ՝ 1,2,3,4,5,14»):***

Հարց 2. Օգտվելով երկու առաջադրանքների աղբյուրների տեղեկություններից և Ձեր գիտելիքներից՝ համեմատեք Վիեննայի վեհաժողովը և Փարիզի խաղաղության համաժողովը՝ ներկայացնելով նվազագույնը մեկ նմանություն և մեկ տարբերություն:

Պատասխան

Աշակերտը պետք է դիտարկի ներկայացված չորս աղբյուրները, համադրելով իր փաստական գիտելիքի հետ, գտնելու համար Վիեննայի վեհաժողովի և Փարիզի խաղաղության համաժողովների նմանությունները և տարբերությունները.

Նմանություններ

- ✓ Երկուսն էլ գումարվել էին համաշխարհային նշանակության իրադարձությունից հետո: Նպատակ ունեին վերականգնելու միջազգային հարաբերությունների բնականոն ընթացքը, առաջին դեպքում Նապոլեոնյան, երկրորդ դեպքում Առաջին աշխարհամարտի պատճառով:
- ✓ Իշխում էր հավերժական խաղաղության հաստատման և միջազգային անվտանգության կայուն հիմքեր ստեղծելու ձգտում: Վիեննայում Սրբազան դաշինքի, Փարիզի վեհաժողովում Ազգերի լիգայի ստեղծմամբ:

[1] Լատ. reparatio, պատերազմ սկսող պետության նյութական պատասխանատվության տեսակ, որը նշանակում է նշված պետության կողմից հարձակման ենթարկված պետությունների նյութական վնասի փոխհատուցում:

Տարբերություններ

- ✓ Վիեննայի համաժողովին մասնակցում էին և՛ հաղթած, և՛ պարտված կողմերը, նույնիսկ պարտված Ֆրանսիայի հաջողվեց պահպանել մեծ տերության իր կարգավիճակը, իսկ Փարիզի վեհաժողովին մասնակացում էին միայն հաղթող երկրները:
- ✓ Փարիզի վեհաժողովին չէր մասնակցում նաև Ռուսաստանը,որը Անտանտի մաս էր կազմում, բայց ուր Բոլշևիկները գրավել էին իշխանությունը և միակողմանի դուրս եկել պատերազմից՝ կնքելով Բրեստ -Լիտովսկու պայմանագիրը:
- ✓ Փարիզի վեհաժողովում գերիշխող մեծ հնգյակի հարաբերություններում առկա էր լուրջ տարաձայնություններ, որն էլ ի վերջո հանգեցրեց ԱՄՆ-ի հեռանալուն, քանի որ չնայած նախագահ Վ, Վիլսոնի, հասարակությունը դեմ էր ԱՄՆ-ի ներգրավմանը Եվրոպայի միջազգային քաղաքականությանը և պետությունը վերադարձավ մեկուսացման քաղաքականությանը:

  Այսպիսով, ԱՄՆ-ն, որի նախագահը կազմել էր «Տասնչորս կետերը», որոնք, ըստ նրա, պետք է հիմք հանդիսանային Առաջին Աշխարհամարտի խաղաղության բանակցությունների և պայմանագրերի համար, չվավերացրեց Վերսալի պայմանագիրը, և երբեք չդարձավ Ազգերի Լիգայի անդամ:

ԴԱՏԱՐԿ ԷՋ